

Træuftet lyngværd

Børnebiblioteket i Sønderborg

etmey



606400
2024

ՀՏԴ՝ 821.19-31 Կողյան

ԳՄԴ՝ 84(5Հ)-44

Կ 807

Կ 807 Կողյան Ն.

Համամերի ժամանակը: Վեպ / Ն. Կողյան. –Եր.: Newmag, 2024.- 308 էջ:

Ուժեղ, բայց խոցելի կանանց թեման, որ Նարինե Կողյանը վարպետորեն նկարագրում է իր և ամուսինը՝ վեպում, շարունակում է նաև այս գրքում:

Վեպի իրադարձությունները զարգանում են 44 օր՝ պատճեազմի ընթացքում։ Գիշավղի հերոսուհի Մինան ամուսնու հետ տնօղավորութեազմ է Ստովանակերտ՝ որդու ծառայության վայրին մոտ գտնվելու համար։ Պատճեազմի տաշին օրը՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտը, Մինայի ու մյուսների համար սկսվում է հրդիռակողությամբ ու սմբակությամբ։ Ամուսնու շտապում է ռազմի դաշտու որդուն գտնելու։ Շիշմանալով սպասարկ՝ ամուսնու և որդու հետևից ժամփա է ընկնում նաև Մինան։

Նա տեսնում է մահ, ավերածություններ ու դամանություններ, բարդ ընտրության առջև և կանգնում, մտածում ոչ միայն իր ծառայող որդու, այլև գերի ընկած ամուսնու մասին։ Ըստանելիան դրամային ալիքանուում է Մոնայի անսպասելի հելությունը։ Գտնում է որդուն, վերադարձնում է ամուսնուն, վեպի հերոսների հետ ի՞նչ է կատարվում հայերի համար ամենածանր օրը՝ նշեմբերի 9-ին։

ՀՏԴ՝ 821.19-31 Կողյան

ԳՄԴ՝ 84(5Հ)-44

Գյուսավոր գործընկեր՝

Վերածննիւթեական Հայութեան

rf.am



ՎԵՐԱԾՆՆԻՒԹԵԱ
ՀԱՅՈՒԹԵԱՆ

ISBN 978-9939-967-28-8

Համամերի ժամանակը © 2024 Նարինե Կողյան, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին։
Իրավունքները ձեռք են թրուվել հեղինակի հետ կիրած պայմանագրով։

Հստ ժողովրդական իին ավանդագրուցի՝ սև կամ մոխ-
րագույն գիշակեր ժանմերը, որոնք միս շատ են սիրում և
նախընտրում են բազմանալ դիակների վրա, դուրս են եկել
Դանութի ափը երիզող մի բարանձավլից, որտեղ մինչև շոնչը
փեղը պատսպարվել էր Սուրբ Գևորգի Նիզակից խոցված ու
վիրավոր նշանավոր վիշապը:

Ի վերջո, վիշապը, իհարկե, սմբակները տնկում է: Պատճա-
ռը, սակայն, ինչպես պնդում է նույն ավանդագրուցը, սրբի
զորավոր հարվածը չի լինում. վիշապը սատկում է՝ գլխի մեջ
բույն դրած և բազմացող ժանմերին քշելով:

Այդպիսով կարելի՞ է ենթադրել, որ վիշապի ուղեղը ժանմե-
ռը կերել են, և խեղճը պարզապես խելագարվել է:

Կարելի՞ է:

Հետո՝ 20-րդ դարի սկզբին, դեռ գոյություն ունեցող աշխար-
հակալ մի տերության կառավարություն հանկարծ որոշում
է կապարով ու ցեմենտով կնքել Դանութի ափին գտնվող և
կասկածելի համրավ ունեցող երկու քարանձավ (սա արդեն
իրականություն է, ավանդագրուց չէ):

Խչո՞ւ երկու...

Պատմությունը դրա մասին լրում է:

Գուցե վիշապները երկուան էին, ասենք, մարդ ու կին, կամ էլ սրբերի վարդի մասին պատմող քրոնիկուրում քարանձավի հստակ կոորդինատները նշված չեն եղել...

Ո՞վ գիտի...

Ասում են՝ ճանմերի այդ տեսակը հիմա էլ նախընտրում է բազմանալ աֆրիկյան գետառատ երկրներում՝ ծվարելով մարդկանց աշքերի մեջ, ինչն էլ, այսպես կոչված, «գետային կուրություն» է առաջացնում:

Կարծիք կա, որ արդեն և առանձին անհատների, և նոյնիսկ ամրողական ժողովուրդների՝ Աֆրիկայում գտնվել-չգտնվելը կամ ջրառատ երկիր ունենալ-չունենալը բոլորովին էլ պարտադիր չէ՝ խելագարվելու և/կամ կուրանալու համար։ Կարելի է կուրանալ և խելագարվել նաև սեփական երկրում, եթե նման ցանկություն կա։ Իհարկե, աշխարհահոչակ հոգեվերլուծարաններն այս երևույթը կարող են (էին) զանգվածային հոգեխանգարմունք անվանել, սակայն ճանմերին սեփական գլուխ թողնել-չթողնելու որոշումն այժմ և միշտ և հավիտյանս հավիտնեց յուրաքանչյուրի անձեռնմխելի իրավունքն է։

Ասում են նաև, որ Դանուրի ավի այն քարանձավում պատրսպարված վիրավոր վիշապին հոչոտող ճանմերը, ի հետուկս աշխարհի բոլոր լեգենդների, վիշապ կամ վիշապակերպ չդարձան։ Նրանք շատ ավելի խելացի էին։ Որովհետև մնալով վիշապի կաշվի մեջ՝ որպես վիշապ էին ընկալվելու, և Սր

¹ 1948 թ-ի դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Ըստանուր վեհաժողովը 217 A (III) բանաձնով ընդունեց և հոգակեց «Մարդու իրավունքների համընդհանուր հոգակագիրը» (Ծանոթագրությունը՝ *newmag*-ի):

Գևորգի, լանցելուտների կամ չինական հերիայից հայտնի հերոսների բազում-բազում սերունդներ նորից ունորից, անվերջ ու շարունակ ելնելու էին պատերազմի անմեռ ոսրիսի դեմ և...

Ուրեմն՝ ո՞ւմ էր պետք այդ հիմար կերպարանափոխությունը...

Այդպիսով, ժանմերը, որ իրականում այլս ժանմք չէին, մնացին ժանմի խեղճ ու խոցելի կերպարի մեջ, և յուրաքանչյուր տնային տնտեսութու սկսեց թվա, թե լայի մի կտորով կարող է շանսատակ անել դրանց. ի վերջո, ժանմք են և...

...եվ վիշապը հաղթեց:

Նա վերածնվեց եղեմից մնացած մի քարքարոտ հողակտորի վրա և իր մազուր մոռութով սկսեց դանդաղ ու հաճույքով հոշոտել հինավորց այդ երկրի բնակիչների ուղեղները, բազմացավ նրանց աշբերի մեջ և...

...Սկսվեց ժանմերի ժամանակը:

Հինավորց երկրի մարդիկ հիացան անկուչտ ու անճոռնի ժանմով, բարձրացրին ու երկրպագեցին ժանմին՝ պատրաստ նրա ուղերի տակ, գառների փոխարեն, զոհաբերելու սեփական զավակներին: Նրանք մոռացան հինն ու ծաղրեցին վիշապի դեմ նոր կովողներին: Հետո թաղեցին իրենց արժանապատիկ զավակների մարմիններն ու անմահություն մաղթելով ժանմին՝ ստացան, կերան ու վայելեցին իրենց մատադած որդիների գինը:

Սակայն ոչ ոք չգիտեր, չէր կարող իմանալ, որ մի օր պիտի գա ժանմի հետ մենամարտողը՝ վերածնվելու ոչ մի հնարավորություն չթողնելով վիրավոր վիշապին և...

...Ավարտվելու է ժանմերի ժամանակը:

Զորակոչվելուն մոտ երեք ամիս կամ մի քիչ ավելի էր մնացել, և Արմանը վաղուց չէր անհանգստանում այն ժամանակի համար, որ պիտի ապրեր ընտանիքից, տնից հեռու, երբ տունն արդեն գրեթե կողքին էր. ծնողները՝ Աղամին ու Սոնան, ամեն ինչ թողնելով, եկել և մոտերքում էին հաստատվել:

Հեշտությամբ թնակարան գտան, վարձակալեցին: Աշխատանք էլ ճարվեց, ինչը շինարար-ինժեներ հայրն իրենց քաղաքում չուներ և ընտանիքը կերակրելու համար ամեն տարի, իր նման հազարավորների երամի ծայրը քննած, հյուսիս էր չվում՝ տանը հայտնվելով երկու-երեք կարծ ու երկար հայտնություններով, ինչպես նաև Նոր տարվա սեղանի շուրջ բազմած պարապության օրերին: Մայրն էլ թողել էր դպրոցում ֆիզիկայի ուսուցչուհու իր աշխատանքը. սիրով էր թողել: Բնակարանին մոտ կարի ոչ մեծ արտադրամասում կաշխատեր այսքան, որքան պետք էր. «Աստծուց առաջ ընկնել չէր ուզում»:

Այդպիսով, Արմանի համար բանակում անցկացրած վերջին մեկ տարին թերևս ամենաերջանիկն էր. ընտանիքը, հայրն էր կողքին, և մի քանի հարյուր կիլոմետր հեռու գտնվող փոքր

հայրենիքի իր հատվածում կարոտելու և կյանքից ավելին ստանալու ակնկալիք ու պահանջ չուներ:

Ստացվում էր այնպես, որ ընտանիքն Արմանի ազատականի օրերին ավելի ու ավելի հաճախ էր ընսարկում տեղում մշտական թնակություն հաստատելու հարցը՝ ծանրութեթև անելով դատեր՝ բժշկական համալսարանում սովորելու անհատնում թվացող տարիները, ինչը, մեղմ ասած, երբեմն երբեմն հետաձգում էր որոշման վերջնական ընդունումը: Սակայն Ադամն ու Սոնան չէին բացառում նաև այն հանգամանքը, որ Նարեն կարող էր շատ ավելի շուտ ամուսնանալ, և արդեն իր նոր ընտանիքի հետ ընտրեր՝ որտեղ է ապրելու անկախ հայրական տանն ընդունվող որոշումներից, կամ ել պարզապես լավ աշխատանք գտնելով մայրաքաղաքում՝ նախընտրեր այնտեղ մնալ: Արմանի խնդիրն էր մի փոքր քարդ. մինչև զորակոչվելը նա համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ էր ընդունվել, սակայն... ի վերջո, դրան էլ կարելի էր լուծում գտնել:

Օգոստոսյան առավոտի շոյող ջերմությունը, բաց պատուհանի թիվից կախված, դեռ չգումարված երկինքը և ներսուդուրս անող չարաքմի զեփյուտը հովվերգության անտեսանելի ալիքներ էին սփռում շորջը, և կարի մերենսայի վրա կռացած Սոնային աշխարհը թափից էր թվում, ինչպես ծերքի տակ սահող և մանկան հագուստ դառնալու պատրաստ փափուկ գործվածքը: Պատուհանից անդին օդի մեջ լողացող մեղուների ամենօրյա թզզոցն էր, սակայն այսօր այն մի տեսակ ուրիշ էր, կարծես՝ անծանոթ:

Լսողությունն ակամա լարվեց, ընդհատեց աշխատանքը և ելսելով տեղից՝ որոշեց ի վերջո տեսնել այդ «անծանոթը»:

Տեսավ, բայց տեսածը մի պահ չըմբռնեց. մեղոնների փոխարեն արտադրամասը երիզող մրգատու ծառերի վրա մերթ թանձրացող, մերթ նոսրացող սևությոն կար, որ ամպի պես ծառից ծառ ու մրգից միրգ էր տեղափոխվում: Ամպը կլորանում էր, հետո, սեպի նման սրելով առաջնագիծը, հարձակվում էր հերթական թիրախի վրա և փոխակերպումների հարահոսի մեջ նորից ու նորից վերագտնելով իր կորությունը՝ մեծ ու անտակ սև աշբի էր նմանվում:

Սոլնային մի պահ նույնիսկ թվաց, թե ամպն օդում կանգ առավ և ուշադիր իր կողմը նայեց: Ինչ-որ չարագույժ քան կար այդ սև քանականության մեջ:

Որոշեց ազատվել տարօրինակ մտքերից. հասկացավ, որ ամպը գորշ խոշոր ու ճարպոտ ճանճերի պարս է, և սիրտը խառնեց: Նա հապճեպ ծածկեց լուսամուտն ու շրջվեց դեպի կարի մեքենաների աղմուկը:

— Կիսեղդվենք, ինչո՞ւ ես փակում, — բողոքեցին բոլորը:

Սոլնան չլսեց: Մեղմեց կոպերը և ձեռքերով կաշեց պատուհանագոգից: Թվաց՝ սրտխփոցը խառնվեց ուրիշ, անծանոթ զարկերի հետ. «Ապազմ է...»:

Երբ աշբերը քացվեցին, սրտի քարախն այլս լսելի չէր: Մի ակնթարթ չիսակացավ՝ որտեղ է: Ուժերն օդում էին: “Իրանք վեր պարզած և սեփական մարմնի նկատմամբ ուղղահայաց պահելու ջանքեր գործադրող կանանցից մեկը, որ ակնդետ իրեն էր նայում, զգուշավոր շնչաց.

— Ուշը տեղն եկավ:

Իր պատճառով շուտ եկավ նաև ընդմիջումը: Տնօրենը որոշեց այդ օրն ընդհանրապես իրեն ազատել աշխատանքից. և մոռով հանգատանառ:

Չհամաձայնեց. միևնույն է, տանը մենակ էր լինելու: Հիշեց, որ մի գավաթ սև սուրճից բացի՝ առավոտյան ոչինչ չխմեց, չկերավ:

— Դրա համար էլ վատացա, – բարձրաձայն մտածեց ու գիտակցաբար ծամեց տնից բերած «ընդմիջումը»:

Հետո տնօրենն անսպասելի հայտարարեց, որ նոր, անհետաձգելի պատվեր ունեն, որ մանկական հագուատը կսպասի, և կարի մերենաների շարքերի միջով ու անհայտ հետազծով շարժվող արտադրամասի տեխնոլոգի դատարկ սայլակը լցվեց մանկական հագուստի չկարված մնացորդներով՝ կտորե թևիկ-թարթիկներով, տոտիկներով և փորդիկ իրաններն ընդգրկելու պատրաստ այլ կիսատպատություններով:

— Դրոշներ ենք կարելու, շատ դրոշներ, – բացատրեց տեխնոլոգն ու հեռացավ: – Գործներդ թեթևացավ: Պիտի որ ուրախանաք:

Դրոշները երկուսն էին, երկուսն էլ՝ հարազատ և սիրելի: Այսպես որ դրանց առանձին մասերն իրար կցելը դժվար չէր, և կարև այսուհետև կարող էր նաև այնքան էլ ուղիղ չլինել: Բացի այդ՝ չափսերի տարրերություն էլ չկար, և, ի վերջո, այն որևէ մեկը չէր հագնելու: Մի խորըն, բոլորն ուրախ էին և ոչ միայն աշխատանքի թեթևության համար:

Հուզվում էր: Եերերը սկզբում դողում էին: Գիտեր, որ տարօրինակ այդ զգացումն ի հայտ էր եկել որդո՞ւ՝ բանակում ծառայության անցնելու հետ միաժամանակ: Այս խանդակառ երակի պես միշտ իր ներսում էր՝ բարախող, ոգևորող ու կազդուրող, որը, սակայն, համեմված էր նաև անորոշ մի երկյուղով, որի պատճառների մեջ նա ընազդաբար չէր ուզում խորանալ:

Հետկեսօրյա շոգը քամո՛ թեկուզն աննշան ակնկալիքով
բացել էր բոլոր պատուհանները, բայց փոխարենը ելումու-
տի բոլոր հնարավորություններն իրենց ձեռքն էին վերցրել
ճանմերը: Այսպես որ, ճակատն ու ծոծրակից հոսող քրտինքը
սրբելու հետ միաժամանակ կար անողները ստիպված էին
քշելնաև այդ աներես թևավորներին:

Սոնան արագ հոգնեց: Կողքին դրված շիշը դատարկ էր:
Նա շուրջը նայեց և վերցնելով էլի մի քանիսի դատարկված
տարաները՝ գնաց ջրի հետևից:

Ծերի մի մասն ապակուց էր, և ծանրացած գրկում թաց ու
սահող ապակին պահելը, մանավանդ այսօր, կարծես ավե-
լի բարդ էր: Ի վերջո, հենց արտադրամաս-սենյակի շեմին
ՀՅԵՐԻՑ մեկը, այնուամենայնիվ, ցած ընկավ և սայիկապատ
հատակի վրա փշուր-փշուր եղավ: Առանց մտածելու՝ Սոնան
արագ հատակին դրեց գրկի պարունակությունն ու կրացավ՝
ապակու կտորները հավաքելու:

Ամեն ինչ կարծես կարգին էր, երբ ջրի մեջ անտեսանելի
դարձած դավադիր մի շեղը պատուց ափը:

— Ասացի՞ն՝ տուն գնա, պիտի գնայիր, — գլուխը տարութերեց
տեխնոլոգը: — Էսօր քո օրը չէ:

Սոնան ցավի մեջ ժպտաց ու վիրակապվելուց հետո վերա-
դարձավ իր տեղը: Էս մեկն էլ կավարտի ու կգնաւ Վերջ:

Զերքը ցավում էր. կարում էր դանդաղ, դադարներով: Դա՛
դեռ ոչինչ. աներես մի ճանճ իրեն հանգիստ չէր տալիս: Մի
ձեռքով ճանմին քշելով, մյուտով գործվածքն առաջ իրելով՝
հասկանում էր, որ կարն ուղիղ չի ստացվում: Մի պահ նոյնիսկ
որոշեց քանդել, նորից կարել, սակայն գործվածքը բարակ էր,
հյուսվածքը՝ ցանցառ: Հասկացավ, որ «ունքը շինելու փոխա-

ամբողջական գիրքն այստեղ է՝